ellips

Անկանխիկ վճարման համակարգը ճաշարանների համար

Եթե ձեր ընկերությունն ունի ճաշարան և ընդմիջումների ժամանակ դուք բախվում եք հաճախորդի պատվերն արագ ու ճշգրիտ հաշվարկելու խնդրին, ապա մենք կօգնենք ձեզ՝ առաջարկելով անկանխիկ վճարումների համակարգը, որը նախատեսված է տարբեր ընկերությունների ճաշարաններում վճարումների կազմակերպման համար:

Ձեռք բերելով այս համակարգը՝ դուք կկարողանաք վճարումներն ընդունել ռադիոհաճախականային պլաստիկ քարտերի ՝ ոչ բանկային, կամ աշխատակիցների համար հատուկ նախատեսված էլեկտրոնային անցագրի միջոցով, որը հաստատվում է ընկերության ղեկավարության կողմից հատկացվող ամենամսյա գումարի սահմաններում:

Ներքին ցանցի առկայության դեպքում տարատեսակ հավելյալ աղյուսակները Excel ֆայլերի տեսքով ներմուծվում են հաշվապահության համար հասանելի դաշտ և կարելի է կիրառել աշխատավարձի հաշվարկման ժամանակ:

1. Ինչի՞ համար է նախատեսված այս համակարգը:

Համակարգը թույլ է տալիս արագ և արդյունվետ ընդունել հաճախորդների պատվերները և հաստատել ՝ անմիջապես հաշվի առնելով վճարման ձևը՝ կանխիկ, կանխավճար ընկերության կողմից, պահումներ աշխատավարձից կամ վճարման ձեր նախընտրած տարբերակը:

2. Որտե՞ղ է կիրառվում մեր համակարգը:

Այս համակարգը կիրառելի է այն ընկերությունների համար, որոնք ունեն սնման համար նախատեսված վայր: Մեր այս համակարգն իր արդյունավետ կիրառությունն

է գտել այնպիսի կազմակերպություններում, ինչպիսիք են՝ ‹‹Արմենալ Ռուսալ›› ու Հայաստանի կոնյակի և գինու գործարանը:

3. Ինչպե՞ս է կառուցված մեր համակարգը:

Համակարգն ունի հետևյալ կառուցվածքը՝

- երկկողմանի էկրան (հաճախորդի էկրանն ու գանձապահի սենսորային մոնիթորը),
- պլաստիկ քարտերի համար նախատեսված կարդացող սարք, որը տեղադրված է դրամարկղի մոտ,
- համակարգիչ,
- հաշվարկման ցանցային սարք, որը նախատեսված է տվյալների բազայի ձևավորման համար.
- հատուկ ծրագրային ապահովման փաթեթ

4. Ինչպե՞ս է աշխատում մեր համակարգը:

Հաճախորդը բարձրաձայնում է իր պատվերը, իսկ գանձապահը ընտրում է այն ճաշացանկից, որն առկա է սենսորային մոնիթորի վրա:

Հաճախորդը, իր էկրանին տեսնելով պատվերը, հաստատում է այն իր հաշվառման քարտով: Էկրանի մյուս կողմից գանձապահն իր հերթին հաստատում է պատվերը՝ համաձայն վճարման հայեցակարգի:

5. Ո՞րն է մեր համակարգի կիրառման արդյունավետությունը

Համակարգի շնորհիվ դուք կկարողանաք՝

- ավելի արագ սպասարկել հաճախորդներին,
- ընդունել հաճախորդներ, ովքեր այդ պահին չունեն կանխիկ գումար, քանի որ կարող են վճարել համակարգում հաստատված այլ ձևերով,
- վերլուծել ճաշարանի աշխատանքի արդյունավետությունը, ճաշատեսակների վաճառքի և նմանատիպ այլ հաշվետվությունների առկայության շնորհիվ,
- տեսնել ըստ հերթափոխերի ընդմիջումների ժամատախտակի կազմման ճշգրտությունը,

- մեր համակարգի ամենակարևոր առավելությունն այն է, որ ծրագրային փաթեթը մշակվում է՝ Էլլիպս ընկերության մասնագետների կողմից, ուստի ելնելով ձեր իսկ նախընտրություններից, ինչպես նաև ձեր պատվերի առանձնահատկություններից՝ հնարավոր է կատարել որոշակի փոփոխություններ մեր ծրագրում:
- ծրագիրը տրամադրվում է ձեր իսկ նախընտրած լեզվով՝ հայերեն, ռուսերեն, կամ անգլերեն: